

# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

**Մարտի 30-ին, կիրակի. Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Զատիկ է դարձյալ, քրիստոնեական եկեղեցու և բովանդակ հայության մեծ և սիրելագույն տոնը:

Հարության և գարնան տոն:

Վաղ առավոտից արտակարգ աշխուժություն է տիրում մայրավանքի շրջափակում: Ամեն կողմ տոնական բարձր տրամադրություն:

Հավատացյալների հոծ բազմությունը փութացել է Մայր տաճար՝ իր աղոթքն ու ուխտը կատարելու և ներկա լինելու օրվա հանդիսավոր ս. պատարագին:

Ժամը 11-ին տոնական ու զվարթ դողանջում են Մայր տաճարի զանգերը:

Ժամը 11.30-ին Հայոց Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական հանդիսավոր ս. պատարագը:

Ս. սեղանին սպասարկում են տ. Արսեն և տ. Գևորգ սրբազանները, տ. Մասիս և տ. Թորգոմ աբեղաները, քահանայից և սարկավագաց դասը:

Ս. պատարագի երգեցողությունը դաշն ու հոգելից կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Խորեն Մելյանեջյանի:

Հայրապետական ս. պատարագին ներկա են Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը, սփյուռքահայ ուխտավորներ և պաշտոնական այլ անձինք:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա սուրբ խորհրդի համապատասխան, Վեհափառ Հայրապետը բովանդակալից և ոգեշունչ քարոզ է խոսում, որը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան՝ Իր ճանապարհին օրհնելով հավատացյալների բազմությանը:

Ժամը 15-ին Ղազարապատի սեղանատանը Վեհափառ Հայրապետը նախագահում է զատկական ճաշին, որին մասնակից են լինում նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, մայրավանքի պաշտոնեության ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ:

Օրվա հանդիսությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով: